Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով համակարգիչ ամբողջը մեկում, բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի և փոշեկուլի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	05.06.2026թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝	Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գ. Խաչատրյան Է Հարությունյան Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյանը

1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին

(Կ. Բարսեղյան)

1.1 Գնման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

1.2 Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի (Համակարգիչ ամբողջը մեկում) 1-ին տեղ զբաղեցրած՝ Ասատրյան Ռուզաննա Մանվելի ԱՁ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես տեխնիկական բնութագրում հստակ չի ներկայացնում համակագչի էկրանի, պայծառության, մաքրության, պրոցեսորի, կոշտ սկավառակի, օպերատիվ հիշողության և այլն, վերաբերյալ տեղեկատվությունը (նշված է առնվազն):

Անհրաժեշտ է հստակեցնել և համապատասխանեցնել հրավերի պահանջներին:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 08.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Կ. Բարսեղյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 09.06.2026թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 , դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահող՝		Կ. Բարսեղյան
Անդամներ՝		Գ. Խաչատրյան
		Է. Հարությունյան
		Ա. Խաչատրյան
Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝		Գ. Հակոբյան